

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԻ ԵՎ ՓՈՍՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՊԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ԱՐՄԱՆ ԴԵՄԻՐԽԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Արման Դեմիրխանյան:

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կապի և փոստի վարչության կապի բաժնի գլխավոր մասնագետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Զեխիայի Հանրապետություն, ք. Պրահա, 2024թ. մարտի 19-ից մարտի 21-ը:

4. Հրավիրող կողմը.

ԱՄՆ առևտրային իրավունքի զարգացման ծրագիր (CLDP):

5. Գործուղման նպատակը.

Մասնակցություն Պրահայի կիբեռանվտանգության համաժողովի շրջանակներում անցկացվող սեմինարին (<https://www.praguecybersecurityconference.com/>):

2024 թվականի համաժողովի նպատակն էր ներկայացնել կիբեռսպառնալիքների հակազդման, Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) քաղաքականության և կարգավորման, պետական-մասնավոր գործընկերության, անցում դեպի հետքվանտային գաղտնագրության, արհեստական բանականության ներդրման և այլ հարցեր:

6. Կայացած հանդիպումները և քննարկված թեմաները.

Երկօրյա համաժողովի ընթացքում բանախոսները պանելային քննարկումների միջոցով ծանոթացնում էին առկա SCS մարտահրավերներին:

«Կիբեռագրեսիայի հակազդում և ճկունության զարգացում» թեմայով ներկայացվել են կիբեռհանցագործությունները և դրանց նպատակները, բերվել են հանցագործությունների պրակտիկ օրինակներ:

«Անվտանգ և ապահով արհեստական բանականության (AI) ապահովում: Արդյոք մեզ անհրաժեշտ են սկզբունքներ, կամ կանոնակարգեր» թեմայով քննարկման ժամանակ ներկայացվեցին արհեստական բանականության կիրառման հիմնական ուղղությունները կիբեռանվտանգության ապահովման նպատակով, ինչպես նաև քննարկվեցին օրինակներ դրա կիրառման գործում, արհեստական բանականության կիրառման կարգավորումների անհրաժեշտությունը:

«Ջրի տակ. Անդրծովյան օպտիկական մալուխների պաշտպանությունը կիբեռսպառնալիքներից և արտաքին միջամտությունից» քննարկմանը ներկայացվեցին անդրծովյան մալուխներով ինտերնետային կապի անհրաժեշտությունը, մալուխների վնասման պատճառները և եղանակները, դրանց պաշտպանության եղանակները:

«Քվանտային մարտահրավեր. Պատրաստ ենք հետևանքներին» թեմայով քննարկմանը ներկայացվեցին քվանտային համակարգչի ստեղծման հնարավորությունները և սկզբունքային տարբերությունները առկա համակարգչային տեխնոլոգիաների հետ, դրանց կիրառման հնարավորությունները:

«Կիբեռտարածքում հեռավորություն չկա» քննարկմանը ներկայացվեցին երկրի տարածքում, ինչպես նաև այլ երկրի տարածքից կազմակերպվող կիբեռհանցագործությունների օրինակներ և դրանց ազդեցությունը պետական և մասնավոր հատվածների գործունեության վրա:

«Նույն նպատակը, տարբեր մոտեցումներ, ներդաշնակեցնող միջադեպ» թեմայով քննարկումների ընթացքում ներկայացվեցին կրիտիկական ենթակառուցվածքների կիբեռանվտանգության մոտեցումները և կիբեռհանցագործությունների թիրախները:

«Կիբեռաշխատուժ. Կիբեռտաղանդների ձևավորում և պահպանում» քննարկմանը մեծ ուշադրություն դարձվեց նոր սերնդի պատրաստվածությանը կիբեռտարածքում աշխատելու

համար, ներկայացվել է Լիտվայի օրինակը՝ 100% թվայնացում և երեխաների ուսուցում դպրոցից ոչ միայն ծրագրավորման տարրերին այլ նաև կիրճեռանվտանգության ապահովման տարրերին:

«Միասին խթանելով փրկագին էկոհամակարգը» թեմայով քննարկման ժամանակ պարզաբանվեցին արդյոք անհրաժեշտ է վճարել փրկագին թե ոչ հարցերը, բերվեցին բիզնեսից փրկագին պահանջելու և դրանց արձագանքելու մասնավոր դեպքեր:

Համաժողովի օրակարգը և այլ նյութերը հասանելի են <https://www.praguecybersecurityconference.com> հղումով:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Համաժողովին հրավիրված մասնակիցների կազմում հանդիպում է տեղի ունեցել CLDP-ի ավագ իրավաբաններ Մայքլ Քոֆիլդի և Թաջմա Ռահիմիչի հետ: Ներկայացվել են իրենց կազմակերպության գործառույթները և մեր երկրի հետաքրքրությունները կապի զարգացման բնագավառում:

CLDP-ի ավագ իրավաբան Մայքլ Քոֆիլդի և կոնֆերանսի բանախոս «Ciena» ընկերության կառավարության հարցերով փոխնախագահ Գրասե Կոհի հետ քննարկվել է դեպի ծով ելք չունեցող պետությունների համար անդրծովյան ինտերնետ կապուղիներին միանալու իրավական կարգավորումների վերաբերյալ և պայմանավորվածություն է ձեռք բերվել ստանալու որոշ տեղեկություններ ITU-ի և այլ միջպետական կազմակերպությունների կողմից այդ հարցում ընդունված իրավական կարգավորումների վերաբերյալ:

Փորձի փոխանակման շրջանակներում առանձին քննարկումներ է տեղի ունեցել տարբեր երկրների ներկայացուցիչների հետ՝ Կոլումբիայի Հանրապետության նախագահի ավագ խորհրդական Սաուլ Կատտանի հետ՝ 5G ցանցի ներդրման և հաճախականությունների սպեկտրի ազատականացման, ինչպես նաև կարգավորողի կողմից լիցենզիաների տրամադրման վերաբերյալ, ինչպես նաև Մալդիվների Հանրապետության հեռահաղորդակցության վարչության գլխավոր գործադիր Իլյաս Ահմեդի և տեղեկատվական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի ղեկավարի հետ՝ ավտոճանապարհներին բջջային լայնաշերտ ինտերնետային ծածկույթի, անդրծովյան օպտիկական մալուխների առկայության և դրանց սպասարկման վերաբերյալ:

Հանդիպում է տեղի ունեցել Թունիսի Հանրապետության հեռահաղորդակցության կարգավորող մարմնի ներկայացուցիչների հետ՝ 5G ցանցի ներդրման և դրա անվտանգային համակարգերի վերաբերյալ:

Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարության կապի, տեղեկատվական և ժամանակակից տեխնոլոգիաների վարչության պետ Էկա Կուբուսիձեի հետ հանդիպման ընթացքում քննարկվել է լայնաշերտ ինտերնետի հասանելիության, ավտոճանապարհների երկայնքով շարժական կապի լայնաշերտ հասանելիության ապահովման և ենթակառուցվածքների համատեղ օգտագործումը ինչպես նաև՝ Վրաստանում այդ բնագավառը կարգավորող գործող օրենքը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եզրակացություններ, ժամկետներ, պատասխաններ ակնկալող արդյունքներ.

Առաջարկվում է թվայնացման բնագավառում Լիտվայի փորձի ներդրումը և կիրառանվտանգության վերաբերյալ տարրական գիտելիքների ներառումը դպրոցական ուսումնական ծրագրերում:

Հաշվի առնելով, որ Վրաստանի կառավարությունը ընդունել է ենթակառուցվածքների համատեղ օգտագործման վերաբերյալ օրենք, որտեղ շոշափվում է պետական և մասնավոր հողատարածքներով անցնող ավտոճանապարհների և այլ ենթակառուցվածքների կառուցման հարցերը և ենթակառուցվածքների համատեղ օգտագործման փորձը, առաջարկվում է ավելի սերտ աշխատանքներ տանել հեռահաղորդակցության բնագավառում օրենսդրական և պրակտիկ փորձի փոխանակման ուղղությամբ:

Կիրառելի է նաև Մալդիվների Հանրապետության ունեցած փորձը 5G ցանցի ներդրման մասով, քանի որ ազգաբնակչության 85%-ը ունի ծածկույթ: Առաջարկվում է ուսումնասիրել և փորձի փոխանակում կազմակերպել տվյալ բնագավառում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Արման Դեմիրխանյան

Միջազգային համագործակցության վաչություն
27.03.2024թ.